

# Ինչու են Կարևոր Նշանակված Պատվաստումները

## 1. Ինչու՞ է Կարևոր իմ երեխայի համար կանոնավոր պատվաստումներ ստանալը:




- Պատվաստումները և երեխաների առողջական վիճակին հետևելու այցելությունները (well-child visits) կարևոր են բոլոր երեխաների համար և Էական նշանակություն ունեն երկու տարեկանից փոքր երեխաների համար: Պատվաստումներն օգնում են ձեր երեխային լինել ապահով և առողջ: Դրանք պաշտպանում են երեխաներին լուրջ և վտանգավոր հիվանդություններից, ինչպիսիք են՝ կարմրուկը, խոզուկը, պոլիոմիելիտը և կապույտ հազը:
- Եթե ձեր երեխան բաց է թողել որոշ պատվաստումներ, այժմ պատվաստվելու ճիշտ ժամանակն է:
- Տարիքին համապատասխան պատվաստումների ցանկի համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccines/schedules/parents-adults/resources-parents.html](http://www.cdc.gov/vaccines/schedules/parents-adults/resources-parents.html).

## 2. Որտե՞ղ կարող եմ տանել իմ երեխային՝ ստանալու իր անհրաժեշտ պատվաստումները



- Ձեր երեխան կարող է պատվաստվել իր բժշկի մոտ կամ տեղամասային դեղատանը: Հաշվի առեք, որ շատ դեղատներ չեն կարող իրականացնել 3 տարեկանից փոքր երեխաների պատվաստում: Եթե չունեք բժշկական ապահովագրություն կամ հիմնական բժիշկ ձեր երեխայի համար, այցելեք անվճար կամ ցածր արժեքով պատվաստման կլինիկա: Այցելեք [ph.lacounty.gov/ip/clinics.htm](http://ph.lacounty.gov/ip/clinics.htm) կամ գանգահարեք 2-1-1 հեռախոսահամարով՝ ձեզ մոտիկ կլինիկա գտնելու համար: 2-1-1 հեռախոսահամարը հասանելի է օրական 24 ժամ և տրամադրում է տեղեկություններ մի քանի լեզուներով:

## 3. Արդյո՞ք իմ երեխան պետք է պատվաստվի COVID-19-ի դեմ



- Այո: Երեխաների մոտ COVID-19-ը սովորաբար ավելի մեղմ է ընթանում, սակայն որոշ երեխաներ շատ ծանր են հիվանդանում և/կամ COVID-19-ի հետևանքով ունենում են երկարատև առողջական խնդիրներ, որոնք կարող են ազդել նրանց կյանքի որակի վրա: Սա կարող է տեղի ունենալ նույնիսկ առողջ երեխաների մոտ, որոնք չունեն առողջական խնդիրներ: Ձեր երեխայի պատվաստումը նվազեցնում է այս բարդությունների վտանգը: COVID-19-ից լավագույնս պաշտպանվելու համար ձեր երեխան պետք է ստանա պատվաստանյութի բոլոր առաջարկվող դեղաչափերը, ներառյալ խթանիչ(ներ)ը, եթե իրավասու է:
- Ավելին իմանալու համար այցելեք՝ [VaccinateLACounty.com](http://VaccinateLACounty.com):

## 4. Կարո՞ղ է իմ երեխան միաժամանակ պատվաստվել COVID-19-ի և մյուս հիվանդությունների դեմ



- Այո: COVID-19-ի դեմ պատվաստումը կարելի է կատարել մյուս սովորական պատվաստումներին զուգահեռ: Ձեր երեխան կարիք չունի սպասելու COVID-19-ի դեմ պատվաստման և մյուս պատվաստումների, ներառյալ գրիպի դեմ պատվաստման միջակայքում:

## 5. Արդյո՞ք ինձ անհրաժեշտ են լինելու իմ երեխայի պատվաստման փաստաթղթերը՝ նրան դպրոցում կամ երեխայի խնամքի կենտրոնում գրանցելու համար



- Այո: Խնամքի կենտրոն, մանկապարտեզ և 7-րդ դասարան, ինչպես նաև նոր դպրոց ընդունվող բոլոր աշակերտները պետք է ցույց տան, որ ստացել են բոլոր անհրաժեշտ նշանակված պատվաստումները: Մանրամասների համար այցելեք՝ [www.shotsforschool.org](http://www.shotsforschool.org):